սպանում է: Մեկը կամենում է փախչել, քարերի բարձրությունից ընկնելով սատկում է: Մեկն էլ կամենում է գետը անցնել ու փախչել, ինչ-որ եղեգ փաթաթվում է ոտքին, մնում է կախված գետի մեջ և սատկում է: Մեկն էլ պատահում է իր ընկերոջը, սա կարծելով, թե Զաքարիան է, կացնով խփում, սպանում է ու ինքը փախչում է միայնակ:

Մյուս օրը հայտնում են օսմանցիների փաշային, նա տանում է Զաքարիային, մեծարում է նրան և Քանաքեռ գյուղը հանձնում է նրան:

Երբ ջալալիները շատացան Երևանի երկրում, Զաքարիան թաքուն վեց հոգու հետ մտնում է մի տուն՝ գինի խմելու: Ջալալիները իմանալով՝ քսան հոգով կտրում են դուռը: Իսկ Զաքարիան քաջաբար դուրս է գալիս նրանցից երկուսին սպանում է: Ապա իրեն շրջապատում են և ընկերներով սպանում:

Նրա հայր Խաչատուրը լսելով՝ կսկծից նեղսրտելով մեռնում է: Մնում է Մկրտիչը իր մոր՝ Շահնաբաթի և իր քրոջ՝ Օղլանփաշայի հետ: Եվ Կոտայքի նահանգապետը՝ մելիք Դավուդ անունով, իր մոտ է կանչում Մկրտչին և նրա հմտության պատճառով նրան նշանակում է իր տան վերակացու և ամեն ինչ հանձնում է նրան և դարձնում է իրեն քարտուղար:

Մարդ է ուղարկում Պարսկաստանի Գուլփեքան գավառը և այնտեղից բերում է իր քենի Խոսրովին ամուսնու և դուստրերի հետ միասին և բնակեցնում իրենց Արծնի (Արզնի) գյուղում: Նրա Խանաղա անունով դստերը ամուսնացնում է Մկրտչի հետ: Խանաղան ծննդաբերում է Խաչատուրին ու ինձ՝ Զաքարիային: Խաչատուրը ամուսնացավ՝ սերեց Կյուրեղին: Իսկ Զաքարիան լսեց, որ Սուրբ Կարապետի պատանդներ ենք, և իմ հորեղբայրը այնտեղ է մեռել և ինքը եկել այնտեղ անհաճելի վարքով բնակվում է հիսուն տարի: Որ և կոնդակ արեց:

Ահա այսպես ու այսքան: Արարողին և ստեղծողին ամեն փառք հավիտյանս. ամեն:

Սրա համար աղաչում եմ Սուրբ ավազանի լուսածնունդ զավակներիդ, որ որդեգրվել եք երկնավոր հորը Սուրբ Լուսավորչի բազմաչարչար նահատակությամբ, համակրոն եք ու միաղավան Ասքանազյան շառավիղից գոյացած և մակաղած գտնվում եք այս

Սուրբ Կարապետի գոգում ու ծոցում, զուր մի համարեք ձեր ցած խորասուզված ու գետնամած ծառայի աշխատանքը. ձեր բազմաթիվ երախտիքների հետ ընդունեք նաև իմ քիչը: Քանզի շատերը, որ շատերից շատ են նվիրաբերում, իսկ ես փոքրս փոքրերից փոքրը նվիրեցի, ինչպես նկարում սևն են գործածում՝ մեծի հետ մանրերը կարգելով, ուստի ընդունեք այս խեցեղենը արտաքուստ լավերի համար իբրև անհրաժեշտ, որպեսզի անհրաժեշտ ժամին լավը վատթար չհամարվի: Ողջ եղեք ամեն ինչով ամեն բանում:

1136 (1687) թվին (ՆՆ,ՃՃ, ԾԾ,ԺԺ, ԵԵ,ԳԳ): (Արտագրված բազմամեղ Գրիգոր Երևանցու ձեռքով):